№ 102 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7 **1895** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7 № 102

ՔԱՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառի 2 կոպէկ.

ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գէորգ Եւանդուլեանց, իր որդոց և քրոջդուստր օր. Մարիամ Մատինեանցի հետ, Աբգար Յովհաննիսեանց, տիկիններ՝ Գայիանէ Մատակեանց և Հեղինէ Աւթանդիլեան յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ իրանց սիրեցեալ ամուսնու, մօր և քրոջ՝

ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՆԷ ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ սեպտեմբերի 2-ին, ժամը $1^{1}{}_{2}$-ին կէսօրից յետոյ։ Յուղարկաւորութիւնը կը լինի սեպտեմբերի 8-ին, ուրբաթ օրը, առաւօտեան ժամի 10-ին, դէպի Վանքի մայր եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի դերեզմանատան։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարիք չը կայ. Վիէննայի թիւրքայ դեսպանի պաշտօնապիրը, կենօշա քաղաքի միտինգը. Սակալի թէր. Հայոց հարցը և եւրոպական մամուլը. Օրվայ հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կուլտուրայի պատրուակ. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Հեռագիրներ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. «Զահրումար».

ԿԱՐԻՔ ՉԸ ԿԱՅ

—

„Մի թէ արժէ, որ ձեր կաթողիկոսը Էջմիածնից այստեղ գայ՝ դպրոցական գործերը կարգի բերելու համար“,—ասեց հայոց կաթողիկոսը Երևանի եկեղեցիներից մէկի մէջ խօսած իր քարոզում, երբ բացատրում էր, թէ ինչի է ինքը Էջմիածնից Երևան գնացել։

Ի հարկէ, չարժէ, կաւելացնենք մենք կաթողիկոսի այդ արդարացի խօսքերին, որոնց առիթով էլ ուզում ենք մի տարբերական ճշմարտութիւն կրկնել մեր այս յօդուածում։

Ինչ կը լինի, ճշմարիտ, հայոց կաթողիկոսի դրութիւնը, եթէ նա ստիպված լինի օրերով ճանապարհ գնալ, որպէս զի անձամբ, տեղն ու տեղը լուծէ զանազան դպրոցական, եկեղեցական և ուսումնարանական տարաձայնութիւններ ու վէճեր, որոնք ամեն օր պատահում են և միշտ էլ կարող են պատահել ամեն մի գիւղում և քաղաքում։

Եթէ, օրինակ, Շուշու մէջ, Երևան կամ Թիֆլիս, կամ մի որ և է Սղնախ, Արմաւիր, Նոր-Նախիջևան պատահած դպրոցական մի անկարգութեան առաջն առնելու համար, հայոց եկեղեցու գլուխը սկսի ճանապարհորդել այդ քաղաքները, այն ժամանակ, հասկանալի է, նա իր ամբողջ ժամանակը գործ կը դնի միմիայն ճանապարհներ դնալու վրա, այնպէս որ ֆիզիկական հնարաւորութիւն էլ չի լինի ոչ թէ միայն Էջմիածնում դիզված հարիւրաւոր գործերը ուսումնասիրելու և վճիռ տալու, այլ նոյն իսկ հեռաւոր քաղաքները հասնելու և նրանց դանդատները քննելու համար։

Այդ մի կողմից։ Իսկ միւս կողմից կատարելապէս սխալվում են այն մարդիկ, որոնք կարծում են, թէ որ և է դպրոցական գործ, որ և է ամուսնական խնդիր արդարութեամբ լուծելու համար, անպատճառ հարկաւոր է օրեր կորցնել, գնալ այն տեղերը, որտեղ այդ դէպքերը տեղի են ունեցել և այնտեղ քննել այդ գործերը։

Մենք, փառք Աստուծոյ, այլ ևս չենք ապրում այն դարերում, երբ չը կար ոչ վարչական որոշ կազմակերպութիւն, ոչ օրէնք, ոչ կանոն, և ոչ որ և է յարաբերութիւն վարչական կենտրոնի և տեղական օրգանների մէջ, ոչ հեռագիր, ոչ պօստ, այնպէս որ եկեղեցու գլուխը ստիպված էր պտտել ամեն կողմ, որպէս զի կարողանայ դադարեցնել ժողովրդի պէտքերի և դժգոհութիւնների մասին։ Այսօր, ընդհակառակն, յարաբերութիւնները այնքան հեշտացել են և վարչական սիստեմը այնքան կանոնաւորված է, որ շատ հեշտ է, նոյն իսկ էջմիածնում նստած, բարեխղճաբար ուսումնասիրել հարցերը, հաւաքել ամեն տեսակ տեղեկութիւններ, և ապա կայացնել, խղճի և արդարութեան ձայնին համապատասխան, մի դրական վճիռ։

Այդպէս վարվելով, այլ և ունենալով ազնիւ, հասկացող, անձնուէր գործակիցներ, հայոց կաթողիկոսը կարող կը լինի ամենակարճ միջոցում հարիւրաւոր, նոյն իսկ հազարաւոր ամուսնական, դպրոցական, եկեղեցական բազմատեսակ խնդիրներ վճռել և գործերին ընթացք տալ, մինչդեռ ճանապարհորդելով այս և այն կողմերը, ստիպված լինելով որ և է փոքրիկ հարցի համար այս և այն քաղաքը կամ գիւղը գնալ, ֆիզիկական հնարաւորութիւն չի լինի նոյն իսկ ճանապարհորդութիւնը կատարել, ուր մնաց գործեր վճռել։

Ահա այդ տեսակէտից մենք միանգամայն արդարացի ենք գտնում կաթողիկոսի այն խօսքերը, որ մենք բերեցինք մեր յօդուածի սկզբում, և մեզ ուրիշ ոչինչ չէ մնում, բայց եթէ ցանկանալ, որ էջմիածնում վարչական գործերը այնքան կարգի ընկնեն և այնպիսի ընթացք ստանան, որ հայոց կաթողիկոսը ստիպված չը լինի զանազան ճանապարհորդութիւններ կատարել դէպի այս և այն քաղաքները, որ և է, յաճախ շատ պարզ, հարցեր լուծելու համար։

Վերջապէս, ո՞ր օրվայ համար են էջմիածնի վանքում նստած բազմաթիւ եպիսկոպոսները և վարդապետները, եթէ նրանց չէ կարելի հաւատալ, կամ անկարող են նրանք, իբրև քննիչներ, գնալ որ և է հարց տեղի վրա ուսումնասիրել և այդ մասին զեկուցանել իրանց մեծին, որպէս զի նա էլ իր վերջնական վճիռը տայ։

ՎԻԷՆՆԱՅԻ ԹԻՒՐՔԱՅ ԴԵՍՊԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԳԻՐԸ

—

Վիէննայից հեռագրում են՝

«Վիէննայի թիւրքայ դեսպանատունը հրատարակել է մի պաշտօնական ազդ, որով յայտնում է, թէ Փոքր-Ասիայում եղած նոր խռովութիւնների լուրերը կամ անհիմն են, կամ չափազանցացրած։—17 հոգուց բաղկացած հայ աւազակների մի խումբ, ինչպէս հաստատված է, կամաքի մօտ յարձակվեց գնդապետ Բէշիդ-բէյի վրա, սպանեց մի սպայ, վիրաւորեց ուրիշ զինուորներին, յափշտակեց 300 լիրա և չատ ապրանք։ Երկու զօրախումբ, 60 հոգուց բաղկացած, ուղարկվեցին այդ աւազակներին հալածելու։ Այդ խմբից մէկը գտաւ աւազակների տեղը, և սկսվեց կռիւ։ Չորս հայեր սպանվեցին, մէկը վիրաւորվեց և երեքը ձերբակալվեցին, իսկ զինուորների խմբից երկու օֆիցէրներ և երկու զինուորներ ծանրապէս վիրաւորվեցին։ Գաղացված փողերը և ապրանքը գտնվեցին։

«Բանտարկեալները խոստովանվեցին, որ իրանց աւազակախումբը կազմակերպված էր խռովութիւն յարուցանելու հայ ազգաբնակութեան մէջ։

«Թիւրքայ կառավարութիւնը հերքում է այն լուրը, թէ չորս բատալիօն զօրք ուղարկվել են աւազակախմբի դէմ և թէ թիւրք զինուորները բռնաբարութիւններ են գործել, կամ կողոպտել և աւերել են եկեղեցիներն ու վանքերը»։

Մեր հասարակութիւնը, ի հարկէ, արդէն գիտէ, թէ ինչ արժէք ունեն թիւրքայ «հերքումները»։

ԿԷՆՕՇԱ ՔԱՂԱՔԻ ՄԻՏԻՆԳԸ

—

Ամերիկայի Վիսկոնսին նահանգի Կէնօշա քաղաքում հայոց հարցի առիթով կայացաւ մի հրապարակական միտինգ, որը հետեւեալ որոշումը կայացրեց

«Ի նկատի ունենալով, որ Թիւրքիայի քրիստոնեայ հայերը երկար ժամանակ և պարբերաբար հարստահարվում, կողոպտվում և կոտորվում են երկրի կառավարիչներից, կամ իրանց դրացի քիւրդերից, թիւրք իշխանութեան յանցաւոր զանցառութեան պատճառով. ի նկատի ունենալով, որ 1871 թվին, երբ դեռ նոր էր գրիչ վերցրել։

Մի կողմ թողնելով վէպի անմշակ և անհարթ լեզուն, անհամ դարձուածները և տափակ սրախօսութիւնները,—ինչպէս, օրինակ «նրանք՝ (դէմքի արտայայտութիւնները) երբեմն անխորհուրդ յիմարական էին, որպէս անխելք աւանակի խաղաղասէր ոէխը», կամ «այդ բախտաւոր փորը, լաւ ես ասել, այդ ամեն ապականութեան մթերանոցը», կամ՝ «մինչև այսօր էլ այդ հարցը մնացել է անլուծելի, թէ ինչու զաւակները ըստ մեծի մասին չեն նմանում իրանց հօրը...»—հարկաւոր ենք համարում չեշտել այն ոգին և ուղղութիւնը, որով ներշնչված են ամբողջ վէպը և այն տիպերը, որոնք դուրս է բերել Բաֆֆին իր այդ գրուածքի մէջ։ Եւ դժուար չէ տեսնել, թէ որքան անբնական, անաջող և նոյն իսկ հրէշաւոր են այդ տիպերը, թէ դեռ որքան քիչ զարգացած է եղել հեղինակի մէջ էսթէտիական և գրական ճաշակը։

Այդ վէպի մէջ Բաֆֆին կամեցել է ստեղծել երեք դլխաւոր տիպեր—կինտօութիւնից, չարչիութիւնից դուրս եկած և հարստացած, վաթսունական թւականների հայ վաճառականի տիպը, այդ ժամանակվայ «տարազայման կրթութեան» (օտարազգի կրթութեան) արդիւնքը—հայ օրիորդի տիպը, և, իբրև հակապատկեր այդ տիպի, կամ իբրև իդէալական տիպ—հայ օրդով կրթված և սնված հայ աղջկայ տիպը։ Առաջին տիպի ներկայացուցիչն է աղքատ Հացի-Գէլենց Օհանէսի որդի Ղազոն, որ, իբրև որբ, մանելով կինտօների մօտ աշակերտ, կարողանում է իր ճարպիկութեամբ և խորամանկութեամբ հարստանալ և դառնալ «Թիֆլիսի պատուաւոր քաղաքացի՝ Ճանճուր Իվանիչ»։ Նա մի սարսափելի տիպ է,—կեղծաւոր, խաբեբայ, նենդ, ստախօս, կաշառատու, հրդեհաձիգ, մի խօսքով փող աշխատելու համար «հոգին սատանային ծախող»։ Նա ոչ միայն բարոյապէս, այլ և ֆիզիկապէս կատարեալ հրէշ է դուրս բերված։ Ուսում, կրթութիւն, ամեն մի նորութիւն, ամեն մի առաջկայ, որը որ և է յարակցութիւն ունի կուլտուրայի, եւրոպական ձևերի, նիստուկացի հետ, նա ատելով ատում է և անուանում է միշտ «զահրումար» (այդտեղից և վէպը կնքվել է «Զահրումար») բայց դարձեալ նա իր աղջկան՝ Սօֆիին տալիս է ինստիտուտ կարդալու։

Եւ ահա մեր առաջ պատկերանում է «տարազայման կրթութեան» կամ մօդային, ինստիտուտային ուսում ստացած հայ օրիորդի տիպը—մի օրիորդ, որ ամօթ է համարում իր մայրենի լեզուով խօսել, հայ կոչվել, որ շարունակ սիրահարվում է, սիրային յարաբերութիւններ է սկսում, առաջ մի անմեղ գիմնազիստ պատանու հետ, որի մէջ զրգռում է հեշտասէր սիրոյ զգացումը, անբարոյականացնում է նրան, յետոյ, թողնելով նրան, սիրահարվում է մի երիտասարդ ուսանողի վրա, որին ինքն է ուղղակի առաջարկում «դնել ձեռքը իր ծոցում», (ինչ բանաստեղծութիւն), ինքն է նրա չլինքին փաթաթվում և համբուրում, ինքն է նրա մօտ գնում և վերջ ի վերջոյ, նրանից էլ ձանձրանալով, սիրահարվում է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

„ԶԱՀՐՈՒՄԱՐ“

ՎԷՊ ՐԱՖՖԻ

—

Շատ քիչ գրողներ և հեղինակներ կան, որոնց մտքի ստեղծագործութեան ոյժը միանգամից է արտափայլում։ Սովորաբար, ամեն մի գրող, լինի նա վիպասան, բանաստեղծ, թէ հրապարակախօս, անցնում է զարգացման զանազան ֆազիսներ, մինչև նրա տաղանդը հասնում է իր կատարելութեան գագաթնակէտին։

Եւ շատ քիչ գրող կայ, որ վստահաբար իր կենդանութեան ժամանակ իր գրչի առաջին փորձերը հրատարակութեան տալ։ Եթէ, սակայն, գրողի մահից յետոյ, նրա տաղանդը յարգողները և նրան համակրողները, կամ նրա ժառանգները հրատարակում են այդ գրական նախափորձերը, այդ կատարվում է միայն մի նպատակով—ցոյց տալ թէ ինչպէս աստիճանաբար զարգացել և բեղմնաւորվել է հեղինակի տաղանդը։ Այդպիսի դէպքում այդ գրական փորձերը տրվում են հեղինակի աշխատութիւնների լիակատար ժողովածուի մէջ, քրոնիկական կարգով։

Այդ տեսակ կազմած ժողովածուն պարզ ցոյց է տալիս, թէ հեղինակը աշխարհայեցողութեան ինչ ֆազիսներից է անցել, ինչ սկզբունքներ է դաւանել և ինչ համոզմունքներ է ունեցել սկզբում, հաստատ է մնացել մինչև վերջը այդ սկզբունքների և համոզմունքների մէջ, թէ նրանք կրել են փոփոխութիւններ. ինչ պայմանների ազդեցութեան տակ են կատարվել այդ փոփոխութիւնները և հեղինակի մէջ առաջ եկած բարոյական մետամորֆոզան։

Կրկնում ենք, այդ դէպքում թոյլատրելի և ներելի է մի որ և է հեղինակի թոյլ գրուածները կամ «գրչի փորձերը» հրատարակել նրա բոլոր հեղինակութիւնների ժողովածուի մէջ, բայց երբ նրանք հրատարակվում են ինքնուրոյնաբար, իբրև մի առանձին աշխատութիւն, որից կարելի է հեղինակի մտաւոր զարգացման, բարոյական աշխարհահայեցողութեան, իդէաների, դաւանած սկզբունքների մասին գաղափար կազմել, գաղափար, որ միանգամայն հակասում է հեղինակի մասին տիրապետող ընդհանուր կարծիքին և գրականական համբաւին,—այդ ժամանակ այդ տեսակ գրուածները հրատարակողները, ի հարկէ, «արջի ծառայութիւն» են մատուցանում հեղինակին և պարզ ցոյց տալիս, որ իրանք ղեկավարվում են լոկ շահասիրական նպատակներով, ծառայեցնելով այդ նպատակներին հեղինակի անունը և գրական համբաւը։

—

Այդ ընդհանուր խորհրդածութիւնները անելու ապիթ տուեց մեզ Բաֆֆիի «Զահրումար» վէպը, որ այս օրերս լոյս է տեսել առաջին անգամ հեղինակի մահից յետոյ, և որը նա գրել է շատ վաղ, այն է 1871 թվին, երբ դեռ նոր էր գրիչ վերցրել։

Մի կողմ թողնելով վէպի անմշակ և անհարթ լեզուն, անհամ դարձուածները և տափակ սրախօսութիւնները,—ինչպէս, օրինակ «նրանք՝ (դէմքի արտայայտութիւնները) երբեմն անխորհուրդ յիմարական էին, որպէս անխելք աւանակի խաղաղասէր ոէխը», կամ «այդ բախտաւոր փորը, լաւ ես ասել, այդ ամեն ապականութեան մթերանոցը», կամ՝ «մինչև այսօր էլ այդ հարցը մնացել է անլուծելի, թէ ինչու զաւակները ըստ մեծի մասին չեն նմանում իրանց հօրը...»—հարկաւոր ենք համարում չեշտել այն ոգին և ուղղութիւնը, որով ներշնչված են ամբողջ վէպը և այն տիպերը, որոնք դուրս է բերել Բաֆֆին իր այդ գրուածքի մէջ։ Եւ դժուար չէ տեսնել, թէ որքան անբնական, անաջող և նոյն իսկ հրէշաւոր են այդ տիպերը, թէ դեռ որքան քիչ զարգացած է եղել հեղինակի մէջ էսթէտիական և գրական ճաշակը։

Այդ վէպի մէջ Բաֆֆին կամեցել է ստեղծել երեք դլխաւոր տիպեր—կինտօութիւնից, չարչիութիւնից դուրս եկած և հարստացած, վաթսունական թւականների հայ վաճառականի տիպը, այդ ժամանակվայ «տարազայման կրթութեան» (օտարազգի կրթութեան) արդիւնքը—հայ օրիորդի տիպը, և, իբրև հակապատկեր այդ տիպի, կամ իբրև իդէալական տիպ—հայ օրդով կրթված և սնված հայ աղջկայ տիպը։ Առաջին տիպի ներկայացուցիչն է աղքատ Հացի-Գէլենց Օհանէսի որդի Ղազոն, որ, իբրև որբ, մանելով

լով, որ Բ. Դուռը խրախուսում է, եթէ ոչ ուղղակի դրդում հայերի վերջին կոտորածները և նրանց դէմ գործած անզթութիւնները,—մենք, կէնուշայի քաղաքացիներս, կայացնելով հրապարակական միտինգ, արտայայտում ենք մեր բողոքը և զայրոյթը այդ մեծ և տմարդի անզթութիւնների և Թիւրք կառավարութեան՝ քրիստոնեայ ժողովուրդները կառավարելու անընդունակութեան դէմ. մի և նոյն ժամանակ յայտնում ենք մեր խորին համակրութիւնը Հայաստանում տանջվող մեր եղբայրներին:

«Բացի դրանից, մենք որոշում ենք, որ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը հետամուտ լինի գործ դնել իր ազդեցութիւնը կամ ուղղակի Թիւրք իշխանութիւնների վրա, կամ քրիստոնական կառավարութեան հետ միացած, որպէս զի Թիւրք կառավարութիւնը մտցնի այն բէֆորմները, որոնք նորերս առաջարկվել են Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միահամուռ գործակցութեամբ և հարկաւոր երաշխաւորութիւնները ներկայացնի նրանց իրագործման համար:

«Որոշում ենք նոյնպէս յայտնել, որ միտինգի կարծիքն այն է, թէ բէֆորմները գործադրելի լինեն ոչ միայն բնիկ հայերի համար, այլ և Միացեալ-Նահանգների հովանաւորութիւնը վայելող քաղաքացիների համար, որոնք Հայաստանի զանազան կողմերում բնակութիւն հաստատած՝ նուիրված են քրիստոնէութեան պրօպագանդային:

«Որոշում ենք նաև յայտնել, որ միտինգի կարծիքն է, թէ ցանկալի բէֆորմները պէտք է երաշխաւորել Հայաստանի համար՝ մի բարձր կոմիսար նշանակելով, որը բնաւ չը պէտք է օսմանեան հպատակ լինի, կամ Թիւրքաց կառավարութեան այժմեան պաշտօնեայ և որը ուղղակի պատասխանատու պէտք է լինի մեծ պետութիւնների առաջ Հայաստանի խաղաղութեան և բարեկեցութեան և երաշխաւոր լինի բէֆորմների ապահով գործադրութեան համար: Այդ պահանջը անում ենք, որովհետև լիապէս համոզված ենք, թէ քանի որ մահմէտականութեանը թոյլ կը տրվի կառավարել քրիստոնեայ Հայաստանը, բռնաբարութիւնները միշտ գոյութիւն կունենան:

«Որոշեցինք այս վճռի մի պատճէնը յանձնել Միացեալ-Նահանգների, իսկ միւս պատճէնը Անգլիայի կառավարութեան:»

ՍՈՍԿԱԼԻ ԹԻԵՐ

Թիւրքաց գաղանութիւններն էլ ունեն իրանց պատմութիւնը, որ կապված է ազգերի ազատութեան պատմութեան հետ: Եւ մինչդեռ ազգերը պարծենում են իրանց մարդասիրական մեծ գործերով, Թիւրքիային վիճակված է արատաւորել մարդկութեան պատմութիւնը սարսափելի եղեռնագործութիւններով և աւելի սարսափելի թւերով:

Միայն այս վերջին եօթանասուն և երկու տարում Թիւրքիան տուել է աշխարհին կոտորածների «հինգ մեծ ներկայացում», չը խօսելով այն անթիւ սպանութիւնների և կեղեքումների մասին, որոնցով յայտնի է Թիւրք ազգի ամեն մի քայլը:

Ահա այդ հինգ մեծ կոտորածներին վերաբերող թւերը, որ առաջ ենք բերում ամենաճիշդ դոկումենտներից քաղելով:

1822 թ.	կոտորել են	50,000	յոյն
1850 թ.	»	10,000	հայ և նեստորական
1860 թ.	»	11,000	մարոնիտ. և յակոբ.
1876 թ.	»	10,000	բոլգարներ
1894 թ.	»	12,000	սասունցի հայեր
	Ընդամենը . . .	93,000	քրիստոնեայ

Ինչ կարող է ասել այդ թւերի դէմ Թիւրքիան:

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I Պաշտօնեաներ

Անգլիական «Daily News» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, որ Մուշի դաշտում չատ Թիւրք պաշտօնեաներ հեռացրվել են իրանց պաշտօններից, ծառայութեան մէջ վատ գործեր կատարելու պատճառով:

II Ընդհանուր ցոյց

Բերլինից, Լօնդօնի լրագիրներին, սեպտեմբերի 5-ից հեռագրում են հետևեալը. «Այսօր աղատամիտ «Vossische Zeitung» լրագիրը գրում է. «Հայկական գործերը կանգնած են անշարժ, մի և նոյն կէտի վրա և արդէն ձանձրալի է դառնում հետևել Թիւրքիայի զանազան անվճռական ձգձգումներին: Ժամանակ է աւելի որոշ քայլ անելու, ուղարկելով Բերլինի դաշնագիրը ստորագրող բոլոր պետութիւնների կողմից մի յայտագիր՝ ընդհանուր կօնֆերենցիայի, ընդհանուր ծովային ցոյցի կամ Թիւրքաց Հայաստանը գրաւելու մասին: Թիւրքը յամառում է, յոյս ունենալով պետութիւնների անհամաձայնութեան վրա. բայց նա պէտք է իմանայ, որ դա նշանակութիւն չունի, երբ հարց է դրված Թիւրքիայի պահպանութեան մասին:»

III Սպառնալիք

«Daily News» լրագրի թղթակիցը Կարսից գրում է. «Մուշից, շատ հաստատ աղբիւրից, հաղորդում են, որ այնտեղ և Բիթլիսում ևս կազմակերպվել է հակաքրիստոնէական Թիւրքաց մի ընկերութիւն, գլխաւորապէս բաղկացած մանր պաշտօնեաներից, որը աշկարայ սպառնում է քրիստոնեաներին կոտորել, եթէ որ Բ. Դուռը ընդունի պետութիւնների առաջարկած բարենորոգումների ծրագիրը: Առաջին զոհը, նրանց խօսքով, պէտք է լինի փոխ-հիւպատոս Հէմփսօն: Այդ սպառնալիքը այնքան ծանրակշիռ է համարվում, որ Թիւրքաց կառավարութիւնը հարկաւոր համարեց զինուորական հովանաւորութիւն առաջարկել նրան: Այն բոլոր հայերը, որոնք երբ և իցէ այցելել են Հէմփսօնին, ենթարկվեցին խիստ տանջանքներին»:

IV Նոր անաջողութիւն

Վիէննայից «Standard» լրագրին հեռագրում են, որ սուլթանը նորերս ուղարկեց աւստրիական Ֆրանց-Յովսէփ կայսրին մի նամակ, որի մէջ գանգատվում է անգլիական դիպլոմատների վարմունքի և այն պահանջի դէմ, որով իր նահանգներից մէկը կամենում են եւրոպական կօնտրոլի ենթարկել: Սակայն, սուլթանի այդ նամակը նոյնպիսի անաջողութեան հանդիպեց, որպէս և նրա ուղարկած նամակները և խնդիրքները եւրոպական ուրիշ միապետներին:

V Գերմանիայի դիրքը

Թէ ինչպէս է վերաբերվում Գերմանիան հայոց հարցին, «Königsberger Hartung»-ի լրագրի Բերլինի թղթակիցը պատասխանում է դրան, ասելով՝ որ գերմանական կառավարութիւնը չարունակում է նոյն տեսակէտն ունենալ, թէ այդ գործը ամենից մօտ է միաբան գործող երեք պետութիւններին, և այդ պատճառով նրանք պէտք է ամենից առաջ որոշեն իրանց ապագայ վարմունքը այդ դէպքում: Ինչ որ վերաբերում է հայոց հարցի առիթով միջազգային կօնֆերէնցիա գումարելուն, առ այժմ դրա մասին ոչինչ յայտնի չէ. բայց եթէ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների մեծ մասը կը կամենայ կօնֆերէնցիա գումարել, Գերմանիան, ի հարկէ, չի հրաժարվի մասնակցելու այդ կօնֆերէնցիային:

VI Անգլիական նաւատօրմը

«Новости» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը, խօսելով հայոց հարցի առիթով, ասում է. «Եթէ սուլթանը չի զիջանի և անգլիական նաւատորմը կը գայ Կ. Պոլիս, այն ժամանակ դրա հետևանքները չատ ծանր կարող են լինել: Նախ և առաջ, վերջ կը դրվի Պարիզի դաշնագրին, որը վերաբերում է՝ Դարդանէլի և Բոսֆորի միջով ազատ երթևեկութեանը: Բացի դրանից, եթէ անգլիական նաւատորմը կանգնի այն ամրութիւնների մօտից, որոնց արդէնված կը լինի գամակոծել անգլիական նաւատորմը, և կանգ կառնի Դօլմա-Բախչէում, այն ժամանակ սուլթանը իրապէս Անգլիայի ճանկերը կընկնի և հարկադրված կը լինի իրան առաջարկված բոլոր պայմանները ընդունել: Յամենայն դէպս, մինչև անգամ սուլթանի գահը կարող է վտանգի ենթարկվել:»

VII Նպաստները

Լօնդօնի «Հայկական ֆօնդը» մինչև սեպտեմբերի 7-ը ստացել է 4293 ֆունտ ստերլինգ, 10 շիլինգ և 1 պենս:

ՕՐՎԱՑ ՀԱՐՑԸ

XXXII

Մեր հաւատը կորաւ:

Մեր հաւատը կորաւ այն անվերջ, անխիղճ ձգձգումներից և խաբեբայութիւններից, որոնցով ամբողջ 17 տարի Թիւրքաց կառավարութիւնը վերաբերվեց դէպի դժբաղդ հայոց հարցը:

Եւ այդ պատճառով, երբ սրանից մի քանի օր առաջ հեռագիրը լուր բերեց, թէ սուլթանը ընդունեց բէֆորմների ծրագրի գլխաւոր կէտերը, և այդ ոչ թէ մանաւոր մի հեռագիր, ինչպէս Դիլլօնի հեռագիրն էր, այլ կիսապաշտօնական հեռագիր, ուղղակի Կ. Պոլսից ստացված, մեր հաւատը կորցրած, հիասթափված հասարակութիւնը անդադար նոյն հարցն էր տալիս. «Ճիշդ է, միթէ, կարելի է արդեօք հաւատալ, թէ այս անգամ էլ խաբում են»:

Խաբէ. որքան ծանր, որքան վիրաւորական է այդ խօսքը մի ամբողջ կառավարութեան համար, որ կոչված է կառավարելու ամբողջ մի պետութիւն, որի սահմանները ընդգրկում են ահագին տարածութիւններ երեք մայր—ցամաքների վրա, և որը իրան թոյլ է տալիս դիմել Եւրոպային ասելով՝ «Մի դիպչիր իմ գոյութեանը, որովհետև ես էլ իբր մի պետութիւն արժանի եմ քաղաքական գոյութեան, եւրոպական մեծ պետութիւնների շարքի մէջ»:

Սակայն ոչինչ: Շարունակ քսան տարի է Թիւրքիան վարժվում է խաբելու արհեստի մէջ, և մինչև իսկ պարծենում է նրանով, որ կարողացաւ այնքան երկար տարիներ խաբել Եւրոպան, և այսօր վաղը գցելով, հասցնել մինչև 19-րդ դարու վերջին օրերը այդ հարցը, որ յարուցված էր դեռ սրանից քսան, քսանհինգ տարի առաջ, իբրև անխզելի շարունակութիւն արևելեան հարցի, որ եւրոպական քաղաքագիտութեան սեղանի վրա է ահա կէս դարուց ի վեր...

Ահա այդ է պատճառը, որ ամբողջ Եւրոպայի հաւատը կորաւ, իսկ հայերինը՝ էլ աւելի: Հայը այլ ևս չէ հաւատում ոչ Թիւրքաց կառավարութեան խոստումներին, ոչ եւրոպական դիպլոմատների վարդապետ յայտերին, և ոչ էլ Կ. Պոլսից ստացվող հեռագիրներին: «Բաղաքական բաղերը» այնքան չատացան, որ հայը դարձել է թերահաւատ, նոյն իսկ անհաւատ դէպի այդ «բաղերը»:

Բայց միթէ այդ «քաղաքական բաղերը», կամ աւելի լաւ է ասել «Թրքական բաղերը» էլի պէտք է ի չարը գործ դնեն Թիւրքահայ ժողովրդի հաւատը, համբերութիւնը, սպասողական տրամադրութիւնը:

19-րդ դարու վախճանը մօտ է: Էլի հինգ տարի և ամբողջ մարդկութիւնը ոտք կը դնի 20-րդ դարու մէջ, երբ մարդկութեան առաջ պէտք է բացվեն աւելի լայն, աւելի մեծ, աւելի

մի ռուս օֆիցէրի վրա և նրա հետ միասին փախչում հօր տնից: Սօֆին մի և նոյն ժամանակ պըճնասէր, շռայլ և վատնող աղջիկ է և իր հօր կործանման ու մանկութեան պատճառ է դառնում:

Սօֆիի հակապատկերն է օրիորդ Աննան—հայ կրթութեան արդիւնքը: Նա ազգասէր է, ստանում և կարդում է «Հիւսիսափայլ», «Կռունկ», «Ճռաքաղ», «Մասիս», «Մեղու» և, թէև նախամեծարութիւնը տալիս է «Հիւսիսափայլին», բայց սաստիկ սիրում է հայ եկեղեցին, ամեն կիրակի ժամ է գնում, ծոմ է պահում մինչև պատարագի վերջը և նչխարը տուն բերում: Նա անսպասելի է համարում «Վարդան Մամիկոնեանի» պէս կրօնական պատմութիւնը թատրոնի բեմի վրա ներկայացնել, մի խօսքով, նա «ծանօթ չէ Վոլտերի և Ռուսօյի հետ, բայց աւելի լաւ է կանանց լինել բարի քրիստոնեայ, քան թէ աղատ փիլիսօփաներ:»

Օրիորդ Աննան հեղինակի իդէալն է. «այո, աշխատելու է Աննայի նման օրիորդներ պատրաստել, դրանք և միայն դրանք կարող են ծնել ազգի համար պիտանի որդիք, և ոչ թէ նիգիլիստական ուղղութեամբ տոգորուած ու փչացած աղջկերքը:»

«Զահրումար» գրուածի տենդենցիան, ոգին և ուղղութիւնը բնաւորոշելու համար բաւական է ասել, որ նրանից կատարեալ «մեղուականութեան» հոտ է փչում, բայց այդ գրուածքը մի և նոյն ժամանակ ցոյց է տալիս, թէ 70-ական թւականների սկզբում, երբ Բաֆֆին առաջին անգամ հանդէս դուրս եկաւ իբրև վիպագրող, որքան միակողմանի, սխալ և նեղ էր նրա բարոյական աշխարհայեցողութեան հորիզոնը, թէ երբ նա, մօտենալով «Մշակին», մանելով մի նոր շրջան, ապրելով մի նոր միջավայրում և ենթարկվելով այդ շրջանի և միջավայրի նոր, թարմ, առողջ ազդեցութեան, ինչպիսի ահագին փոփոխութիւն կրեց նա և արդէն 70-ական թւականների վերջին տարիներում նա հրապարակ դուրս եկաւ բոլորովին կերպարանափոխված, վերածնված և աւելի լայն սկզբունքներ, աւելի լուսաւոր գաղափարներ դաւանող ու քարոզող հեղինակ, մի խօսքով իբրև «Խենթի» «Զալալեդդինի» և «Կայծերի» հեղինակը:

—

Ցիշենք մի անգամ այն մտքերը և խորհրդածութիւնները, որոնք արտայայտված են Բաֆֆիի վերջին աշխատութիւնների մէջ և որոնք, իսկապէս, բարձրացրին Բաֆֆիի անունը. յիշենք, թէ որպիսի եռանդով և կատաղութեամբ Բաֆֆին կուում էր, իր տաղանդի ամենաղարգացած շրջանում, «մեղուականութեան» դէմ, այսինքն այն ուղղութեան դէմ, որի նշանաբանն էր «ամեն բան՝ ինչ որ հայկական է, լաւ է», և համեմատենք այդ բոլորը «Զահրումարի» մէջ արտայայտված մտքերի և խորհրդածութիւնների, մանաւանդ նրա առաջաբանի հետ, և մենք կը տեսնենք, որ «Զահրումարի» հեղինակը բուն, իսկական Բաֆֆիի հակապատկերն է:

Թող թոյլատրվի մեզ գրքի առաջաբանի վերջին կտորի վրա մի անգամ ևս դարձնել ընթերցողների ուշադրութիւնը:

«Զահրումարի» մէջ ընթերցողը կը տեսնէ պատկերներ բարի և չար անձերի. նա կը տեսնի տարապայման կրթութեան (մանաւանդ օտարազգեայ ուսումնարաններում) վնասակար հետևանքները, բարքերի ապականութիւն, բարոյական փտութիւն ժամանակիս շռայլութիւնից և զեղխութիւնից և հայութեան գաղափարի օր ըստ օրէ ջնջվելն ժողովրդի մտքից, և ձգտողութիւն ժողովրդի դէպի օտարամոլ նորաձևութիւնները»:

Եւ Խենթի «երազի» ստեղծողը խորհուրդ է տալիս հայերին չինական պատով պատսպարվել եւրոպական կուլտուրայից...

Այն հանգամանքը, որ Բաֆֆին իր կենդանութեան ժամանակ, ամբողջ 18 տարի, հարկաւոր չը համարեց հրատարակել «Զահրումար» գրուածքը, պարզ ցոյց է տալիս, որ նա ինքն արդէն հրաժարվելով հրաժարվել էր իր այդ «գրչի փորձի» մէջ արծարծած մտքերից և գաղափարներից: Նրա ժառանգ—հրատարակիչները պէտք է ի նկատի ունենան այդ հանգամանքը և չը կարծեն, թէ ինչ որ Բաֆֆին գրել է, կարելի է հրատարակել: Պէտք է մեծ խնամքով և զգուշութեամբ վերաբերվել նրա գրչի փորձերին, պէտք է յարգանքով վերաբերվել դէպի հանգուցեալ հեղինակի յիշատակը, որը թանգ է հայ հասարակութեան համար հէնց այն պատճառով, որ նա անխնայ կուում էր տգիտութեան, նեղասիրութեան, եսականութեան և անառողջ ազգասիրութեան այն ուղղութեան դէմ, որ նա «Զահրումարի» մէջ համարում է իբրև հայ ազգի գոյութեան հիմնաքարը: Մեր կարծիքով, Բաֆֆիի գրուածների հրատարակութիւնը պէտք է յանձնել ձեռնհաս անձերից բաղկացած մի խմբագրական մասնաժողովի, և ոչ պատահաբար, առանց կշռելու և մտածելու, հրատարակել այնպիսի գրուածներ, որ ինքն Բաֆֆին գուցէ երբէք չը ցանկանար հրատարակված տեսնել:

Յամենայն դէպս «Զահրումարի» պէս գրուածները տեղ կարող են ունենալ միայն Բաֆֆիի աշխատութիւնների ժողովածուի մէջ, իբրև պատմական նիւթ՝ հեղինակի տաղանդի աստիճանաբար զարգացումը որոշելու համար:

Մի նկատողութիւն ևս:

Խելացի կերպով դասաւորելով և հրատարակելով Բաֆֆիի գրուածները, դիւրամատչելի անելով նրանց ժողովրդի համար իրանց գնի կողմից, դրանով ոչ միայն հայ հասարակութիւնը կը օգտվի, հնարաւորութիւն ունենալով տաղանդաւոր հեղինակի գրուածքները կարդալու, այլ և կօգտվեն նոյն իսկ իրանք ժառանգները, որովհետև գրքերը աւելի շատ կը տարածվեն, հետևաբար աւելի շատ նիւթական օգուտ կը լինի: Մինչդեռ, նշանակելով այնպիսի անմատչելի գներ (օրինակ «Զահրումարի» գինն 2 ր. է), գրքերը դժուարութեամբ են տարածվում, մատչելի չեն դառնում մեր հասարակութեան ոչ-ունևոր դասակարգերին, մի երեսից, որ ցանկալի չէ. ոչ հասարակութեան և ոչ էլ ժառանգների համար:

Հ. Առաքելեան

բարձր հարցեր, քան մի քրիստոնեայ ազգի փրկութեան հարցն է, մահմետական բռնութեան լուծի տակից։

Քանիներորդ դարը ընդհանուր եղբայրութեան դար պիտի լինի, առանց խտրութեան ազգերի։ Ազգայնական, կրօնական հարցերը պատկանում են 19-րդ դարուն։ Եւ Եւրոպայի համար մի մեծ, պատմական անարգանք կը լինի, ոտք կոխել 20-րդ դարու մէջ մի այնպիսի ամօթալի, չը լուծված հարցով, ինչպէս է մահմետական բռնութեան հարցը՝ մի քրիստոնեայ ժողովրդի գլխին։

Եթէ ոչ հայոց շահերի տեսակէտից, եթէ ոչ քաղաքական տեսակէտից, գէթ ընդհանուր քաղաքակրթութեան տեսակէտից, գէթ ի պատիւ այն իդէալների, որոնց պէտք է ծառայի 20-րդ դարը, Եւրոպան պարտաւոր է լուծել արևելեան հարցի այդ վերջին հանգոյցը՝ հայոց հարցը և տալ միայն ոտք դնել յաջորդ դարու չէմքի վրա։

Միայն հինգ տարի է մնում։ Շտապեցէք, և մի թողէք, որ 20-րդ դարը արատաւորվի բռնաբարված կանանց և սրակոտոր եղած անմեղ երեխաների արիւնով։

Շտապեցէք։

Խ. Մալումեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՐՈՒԱԿ

Մեր Անդրկովկասի սակաւաթիւ թիւրք ինտելիգենցիային պատկանող մի պարոն, Մամեդ-աղա Շախտախտինսկի՝ «Тифлисскій Листокъ» լրագրի վերջին համարներում, աշխատում է ապացուցանել, որ անդրկովկասեան բէգերին, աղաներին և մելիքներին վերապահված է կուլտուրական մեծ դեր՝ մեր երկրում, և այդ պատճառով նա ցանկանում է, որ նրանց ազնուական ճանաչվելու և հաստատվելու գործը չուտով վերջանայ, առանցով դրական վճիռ։

Յօդուածագրի ասելով՝ բէգերը, աղալարները և մելիքները, իբրև ժողովրդի առաջնորներ, աւելի շուտ կարող են ընտելանալ եւրոպական կուլտուրային և յետոյ նոյն կուլտուրան հաղորդել գիւղական ամբոխութեան։ Ուստի անհրաժեշտ է, որ բէգական իրաւունքները և արտօնութիւնները ստանային այն լայն ծաւալը, որ վայելում են ռուս ազնուական կալուածատէրերը, և անդրկովկասեան ազնուականութիւնը ստանար դասակարգային ներկայացուցչութեան կազմակերպութիւն։

Բացի այդ՝ կարևոր է, ասում է թիւրք յօդուածագիրը, որ կալուածատէրը հաստատ ոյժ ձեռք բերի ստանալու իր կալուածքներից ցանկալի արդիւնքը, որպէս զի կարողանայ ապահովել իր ծախքերը և կատարել իր կուլտուրական դերը։

Ուրեմն բէգը, աղալարը և մելիքը պէտք է ազնուականութեան արտօնութիւնները ստանան՝ մեր երկրի բարեկեցութեան, մեր երկրի կուլտուրական առաջադիմութեան համար։ Այդ է այն երևելի միտքը, որ Շախտախտինսկին առանձին ջանքով շեշտում է իր յօդուածներում, պահանջելով, որ բէգերի արտօնութիւնների ձգձգվող գործը ստանայ շուտափոյթ լուծում։

Մենք չը գիտենք ինչի վրա աւելի զարմանանք. այն միամտութեան վրա, որ ունի յօդուածագիրը մեր բէգերի կուլտուրական դերի մասին, թէ այն կարծիքի վրա, որ ունի պարոնը ընթերցողների միամտութեան մասին։ Մինթէ փաստերը, մեր նորագոյն զարգացման պատմութիւնը ոչ մի նշանակութիւն չունեն յօդուածագրի համար։

Բէգը—իբրև կուլտուրական զարգացման առաջնորդ, իբրև առաջադիմութեան կարապետ,—այդ երբ ենք տեսել մեր երկրի մէջ, որ նրա վրա հիմնենք որ և է յոյս և նրա անունով սրբագործենք բացառիկ արտօնութիւններ։ Մինթէ որ և է մէկը խանդարում էր մինչև այժմ բէգերին և մելիքներին կատարելու իրանց պատմական քաղաքակրթական դերը. և մինթէ նոր արտօնութիւնները այսուհետև պէտք է կերպարանափոխեն մեր բէգերին։

Դա մեծ սխալ է և վտանգաւոր սխալ։ Մեր ժողովրդի զարգացումը արդէն ընկել է կանոնաւոր շաւղի վրա և կարօտ չէ արտօնեալ դասակարգի գոյութեան։ Թէ հայ ժողովուրդը և թէ նոյն իսկ թիւրք ազգաբնակութիւնը կազմել են իրանց ինտելիգենցիան ժողովրդի բոլոր դասակարգերից, որի մէջ բէգերը և մելիքները կազմում են փոքրամասնութիւն։

Մասնաւորելով խօսքը թուրքերի մասին, մենք կը տեսնենք, որ թուրք ինտելիգենցիայի տարրերը ամենևին չեն սահմանափակվում բէգական շրջանով։ Բագուի, Թիֆլիսի, Գանձակի, Շուշու, Երևանի գիմնազիաներում և այլ գաւառներում ուսանում են բազմաթիւ մահմեդականներ, որոնք պատկանում են զանազան դասակարգերին անխտիր կերպով։

Թող բէգերը ինչպէս կամենում են ազատվեն իրանց կալուածների արդիւնքները, ինչպէս կարող են՝ փոխեն իրանց նիստուկացը, բայց թող չերպշեն առանձին արտօնութիւններ և բացառիկ իրաւունքներ ձեռք բերել յանուն ժողովրդի կրթութեան և առաջադիմութեան։

Ժողովուրդը ամենևին կարօտ չէ բէգերի արտօնութիւններին, որոնցից ոչ միայն չի ստանայ որ և է օգուտ, այլ և կարող է զգալի կերպով վնասվել։ Ազատեցէք նրան բարերարներից։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վան, օգոստոսի 23-ին

Հաւատալով, որ «Մշակ» լրագիրը, իր երկարամեայ գոյութեան օրից սկսեալ, հանրային ամեն բարենպատակ հարցերին և ձեռնարկութեանց օգտակար եղել է. նկատի ունելով, որ նոյն լրագրոյ նախկին և ներկայիս խմբագրութիւնը ոչ միայն ռուսահայերի, այլ և արտասահմանի մէջ ևս բարձր համակրանաց արժէք մը վայելելով, միշտ մեծ և օգտակար հանդիսացել է հանրօգուտ հարցերի մէջ, վստահութեամբ ձեզ ալ դիմում կընեմ, հետևեալ մարդասիրական գործքին ձեռնտութիւններ խնդրելով։

Զը գիտեմ, թէ ձեզ որքան յայտնի է, որ անգլիական «Daily News» լրագրոյ պաշտպանութեան տակ կազմված է «կանանց մարդասիրական» յանձնախումբ մը, օգնելու մանաւորապէս Սասունի և այլ դժբախտ հայերին։ Արդ, վերջին ժամանակներս, անցեալ աշնանէ և թէ այս գարնանէ սկսեալ, Վանի հարաւային գաւառներէն անգութ քրդերի հարստահարութիւնից և սովից ստիպեալ, տեղս դադթող դժբախտ հայերի վիճակ տեսնելով և նոցա դէթ օրապահիկ մը հայթայթելու բարի նպատակաւ, նախապէս դիմեցի նոյն յանձնաժողովոյ գործակից բարեպաշտ տիկնանց՝ Միսիս Գօլի և Վանի անգլիական հիւպատոսի մայր Մեսիս Հայլվօրդի։ Բարեբախտութեամբ մը այդ թշուառներին համար, անմիջապէս կատարուեց մեր խնդիրը, նախ 55 ապա 82 օսմանեան լիրայ (գումար հարիւր երեսուն եօթ) գումար մը ստացայ։

Եւ որովհետև սոյն չնչին գումարով դեռ կարիւր հոգացողութիւն մը չը պիտի կարողանայի ընել մօտ հազար հինգ հարիւր հոգոյ և, միանուագ բաշխելով զգալի օգուտ մը չի պիտի կարողանայի հասցնել թշուառներին, մտքիս եկաւ հետևեալ աւելի չահաւէտ պարապմունք, որով գուցէ կարելի ըլլար ժամանակ մը գործքով զբաղեցնել, իրենց ձեռքով և աշխատութեամբ ճարել իրենց հացը։ Սոյն գումարով, որպէս դրամագլուխ խղճուկների, առանց ժամանակ կորսնցնելու, ես գնեցի բաւական քանակութեամբ բուրդ և բամբակ, յայտարարեցի եկեղեցիների մէջ. կարօտեալների և գաղթականների ընտանիքի գործող թուոյն նայելով՝ տուեցի նոցա մանելու, գործելու և այլ աշխատութեանց վարձք։ Այդպիսով փոխանակ միանուագ ողորմութեան, երեք ամսէ աւելի սկսեալ, կարօտեալներ, աղատուելով փողոցների մուրացկանութենէ, քիչ շատ կը հայթայթեն իրենց հացը։ Եւ այս գործ շարունակելի է, այնպէս որ գործուած ապրանքներից մաս մը տեղս կը վաճառվի, մաս մը աւելի մերկերին կը տրուի, մեծ քանակութեամբ ալ ուղարկելով Սասուն, որի մանաւանդ ողորմից կը ստանամ գինը, կրկին չահեցնելու նպատակաւ։

Այժմ մենք ունենք մեր զանազան գործարաններում 284 մանող (բուրդ, թէ բամբակ), 12 շալվարագործ, 32 կոտաւագործ, 8 գզող, 7 մասրայ լեցնող, 2 հինած հինող, 2 բուրդ լուացող և 6 հսկողներ, որոնք անդադար հսկողութիւններ կընեն գործաւորների զանազան կիրառութեանց վրայ.—թուով 353 մարդ և կին։ Եթէ իւրաքանչիւր անհատին կամ տան վրա մանր մունր զաւակներն ալ բարգենք, միջին թուով մօտ 1200 հոգի կը շահուի այս թեթև պարապմունքով։ Որքան որ արգահատելի է այս տեսարան, նոյնքան միխիթարական է իր երևոյթն, զի այսու բազմաթիւ հոգիներ, հայ քրիստոնեայ եղբայրները, մասամբ իւիք կը պահեն իրենց արժանապատուութիւն, կազատին մուրացկանութեան տխուր պարագաներէ։

Զը մոռնամք յիշելու որ՝ մենք մեր դեղարան և մանաւոր խնամքն ալ չեմք զլանար դոցա մէջ գտնուած տկարներին, ցաւագարներին. կարելի եղածին չափ, ձրիաբար խնամք և հոգատարութիւն կը դրուի հիւանդներին վրայ։

Ինչպէս պատմեցի, ունելով յիշեալ տիկիններէ ստացածս գումարը՝ ձեռնամուխ եղայ գործին, բայց երբ նպատակին բարոյական կողմերն նկատուեցան և տարածուեցան բարեկամաց շրջանին մէջ, որոնց կը յայտնեմ անհուն շնորհակալիքս, ինքնայօրդոր փութացին ուղարկել մեզ հետևեալ գումարներ։ Տաոն ոսկի Վանի անգլիական հիւպատոս Մ. Հայլվօրդ, հինգ կէս օսմանեան լիրայ Ամերիկայի Վասպէր աղջկանց հմալսարանից, տասներեք կէս օսմանեան լիրայ Ամերիկայէն իմ մէկ բարեկամից, երկու կէս օսմանեան լիրայ Անգլիայէն մեր յատուկ դեղագործից, մօտ տասն օսմանեան լիրայ ալ զանազան բարեկամներից. գումարն կը լինի քառասուն կէս օսմանեան լիրայ։ Միւս գումարին հետ հաշուելով համագումարն, այժմ մօտ երկու հարիւր լիրայի դրամագլուխ մը կունենամք սոյն նպատակին։ Գործելու անկարող եղողները ըստ վկայելոյ՝ կը ստանան արդէն իրանց մաս ողորմութիւն՝ թէ դրամ, թէ հագուստ։ Բայց երբ ձմեռ վրա հասնի, անշուշտ մենք կը ստիպուինք գործին ուրիշ կերպարանք տալ՝ այսինքն, որոնց անհրաժեշտ է՝ բաւականաչափ ողորմութիւն տալու եմք անխնայաբար, և որոց ալ գործ, մեր որոշածին համաձայն, մինչ տեսնամք երբ պիտի բարւոքի այս դժբախտների վիճակ և երբ պիտի վերադառնան իրենց բնակավայր։

Արդ՝ նկարագրելով զայս, կուզամ խնդրել ձեզ յանուն մարդասիրութեան, որ ձեր աջակցութիւնն չը խնայէք այս նպատակին։ Գիտէք, որ դժբախտների աղէտին ամենուրեք շատ մը տխուր էջեր նուիրեցին զանազան լրագիրների միջոցաւ և դեռ նոցա վերաբերեալ սրտաճմլիկ նկարագրութիւններ չեմ ըներ ձեզ, միայն կը վկայեմ և կը խնդրեմ, որ հանրային բարեգործութեան և կարեկցութեան պէտքը զգալի է սոցա համար։

Ձեր բարեհամբաւ լրագրին միջոցաւ յորդորեցէք ռուսահայ քոյրեր, եղբայրներ, տիկիններ և պարոններ, մարդասէր ձեռն կարկառել հարստահարեալ չատախցիներին, մոկացիներին, նորդուզցիներին և այլ հայ քրիստոնեայ քոյրերին և եղբայրներին։ Մեծ յոյս ունիմ, զի ինչ բարիք որ ռուսահայ եղբարք «Մշակ» լրագրոյ միջոցաւ տասն վեց տարի առաջ չը զլացան Վանի նահանգի սովեալներին, այժմ պիտի ընեն նրա մի մաս դժբախտներին։

Սոյն ձեռնարկութիւն և նպատակը աղերսարկած եմք արդէն նորին օծութեան ընդհանուր հայոց Հայրապետին ալ. նորին վեհափառութենէ ալ կը սպասեմք օգնութեան միջոցներ։ Եւ երբ հաճելի պիտի լինի մեր հրաւէրը, հանդանակելի գումարը ուղղակի տեղոյս ռուսաց հիւպատոսարանի միջոցաւ կարելի է ուղարկել, որտեղից ապահովապէս ստանալով կը գործածեմք նպատակին՝ յանուն մարդասիրութեան։

Մնամ յարգանօք՝

Վանի Ամերիկեան օրիորդաց ուսումնարանի վերատեսչուհի՝

Տօքթօր Կ. Ն. Կիմբըլ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, սեպտեմբերի 3-ին

Խոնարհաբար խնդրում եմ նեղութիւն կրէք ներփակած 100 բուբլին հասցնել անմոռանալի հայասէր Զարլզ Ֆիցջէրալդի կարօտ ամուսնուն, իբրև մշտական երախտագիտութեան համեստ արտայայտութիւն՝ մի խումբ բագուաբնակ համակրողների կողմից։

Մրք. Զալեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տպագրելով «Մշակի» այսօրվայ համարում Վանի միսիոներական դպրոցի տեսչուհի դոկտոր Կիմբէլի նամակը, մենք պէտք է ասենք նոյնը, ինչ որ ասեցինք նորերս Մուշի հանգանակիչ յանձնաժողովի հրաւէրի առիթով։ Մենք անկարող ենք հրաւէր կարդալ և հանգանակութիւն բանալ յօգուտ սովեալների, որովհետև հանգանակութեան իրաւունք մենք ունէինք մինչև 1895 թվի յունվարը. դրանից յետոյ սովեալների օգտին այլևս ոչինչ հանգանակութիւն չենք արել «Մշակի» մէջ, և չենք կարող անել։

—

Նորվեգիացի գիտնական Սոֆուս Բուգգէ մի քանի տարի առաջ հրատարակեց մի աշխատութիւն, որով նա ցոյց էր տալիս թէ հայոց և Խաղիայում հին ժամանակները ապրող էտրուսկ ազգի լեզուների մէջ նմանութիւն կայ։ Այժմ նոյն գիտնականը իր մի նոր հետազօտութեամբ ցոյց է տալիս, որ հայոց լեզուն ազդեցութիւն է ունեցել գոթերի լեզուի վրա։ Վիէննայի «Հանդէս Ամսօրեայ» ամսաթերթի վերջին համարներում զետեղված է Սոֆուս Բուգգէի վերջին աշխատութեան թարգմանութիւնը։

—

Յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Բաթումից, Վասիլ Ջավարեանից՝ 3 ր. 2) Ասխաբադից, Յակոբ Ղազանից՝ 1 բուբլի։ Ուրեմն նախկին 3,749 բուբլի 16 կոպեկի հետ այժմ ունենք՝ 3,753 բուբլի 16 կոպ.։

—

Լոնդոնի «Հայկական ֆոնդի» վերջին ցուցակից երևում է, որ Բագուի դրամատէր Ա. Ծատուրեան նուիրել է 100 ֆունտ ստերլինգ (մօտ 1000 բուբլի)։

—

Անհետացած Ֆիցջերալդի կնոջ՝ տիկին Էսթեր Ֆիցջերալդի օգտին, բացի Բագուից ստացած 100 բուբլուց, ստացանք չուչեցի Մնացական Խունունցից՝ 5 բուբլի։ Ուրեմն ընդամենը՝ 105 բուբլի։

—

Մի պարոն, Գառնիկ Տէօքմէճեան անունով, յայտարարում է «Հանդէս Ամսօրեայի» մէջ, որ ինքը գործակալ է «Մշակ» լրագրի, Բուսչուքում։ Հարկաւոր ենք համարում յայտարարել, որ մեր խմբագրութիւնը այդպիսի գործակալ չունի և, առհասարակ, ոչ մի տեղ գործակալներ չէ պահում։ Մենք հրապարակով առաջարկում ենք պ. Տէօքմէճեանին անմիջապէս հանել իր յայտարարութիւնից «Մշակի» անունը, և ազատել մեզ գործակալներ ունենալու պատից։

—

Մեր ժողովրդական գրող Ղազարոս Աղայեանցի օգտին ստացանք Բագուից, Դաւիթ Տէր-Զաքարեանի միջոցով հանգանակած 9 բուբլի և այսօր յանձնեցինք ըստ պատկանելոյն։ Ուրեմն մինչև այժմ հաւաքել ենք 412 բուբլի։

—

Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը, համակրելով Ելիսաւետպոլի նահանգապետի նախաձեռնութեան՝ հիմնելու Ելիսաւետպոլում ընկերութեան մի ճիւղ, խնդրել է նահանգապետից՝ ներկայացնել անդամների ցուցակը, որպէս զի ընկերութեան խորհուրդը նրանց հաստատի և թոյլ տայ բանալ գիւղատնտեսական ընկերութեան ճիւղի գործունէութիւնը։ Ի դէպ. ինչ եղաւ Երևանում գիւղատնտեսական ընկերութեան ճիւղ բանալու հարցը։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը նախանձելի քաղաքավարութեան ապացոյց տուեց մեզ այսօր։ Մենք ստացանք հետևեալ թուղթը՝ (№ 2649) «Объявленіе Городской Управы 6-го сентября напечатать еще два раза...» խնդրում «Մշակ», խնդրում Թիֆլիսի լրագրութիւն. նա «ողորմութեամբ Աստուծոյ» քաղաքային վարչութեան հրամանները էլ պէտք է կատարէ...

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Էրզրում, օգոստոսի 17-ին

Կամախի կոտորածների մասին պաշտօնական տեղեկագրեր ղրկուեցան Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարան, իսկ մի-մի բողոքագիրն էլ յանուն Էրզրումի անգլիական, ռուսաց և ֆրանսացոց հիւպատոսների։ Դէպքի մանրամասնութիւնները անգլիացոց հիւպատոսը հեռագրեց Լոնդոն և Կ. Պոլսոյ դեսպանին։

Ահա էլի մի քանի մանրամասնութիւններ։ Առաջին դէպքից անմիջապէս յետոյ, միւիրը ուղարկում է մէկ թաբուր՝ 250 զինուոր՝ աւազակներին բռնելու։ Դրանք էլ, փոխանակ իսկապէս աւազակներին կալանաւորելու գործին հետևելու՝ յարձակվում են ճանապարհի վրա գտնուած դէպի Կամախ—Երկան, Ագրակ, Հոռոմ, Մօլլա գիւղ և Ցամիրակ գիւղերի վրա և անցողական կերպով հայհոյում, սպառնալիքներ անում, ծեծում և պատահածին թալանելով անցնում են դէպի Կամախ։ Ամենից առաջ զօրքերը յարձակվում են հայոց վանքերի վրա, կողոպտելով և աւերակ դարձնելով Սեղոյ սուրբ Լուսաւորիչ, Աւագ վանք, սուրբ Յակոբ. ձերբակալում են այդ վանքերից ով որ ձեռք է անցնում և առաջնում դէպի Հոռոփուլ, Վերին և Ներքին Բակարիչ գիւղերը։ Զօրապետը (Եաւէր էֆէնդին), տեսնելով հայերի դիմադրութիւնը, զօրքերին թողնում է այդտեղ, իսկ ինքը գնում Կամախ և հեռագրում Կամախից Երիղա՝ միւթէսարիֆին և միւշիր վալի փաչային իբր թէ՝ հայերը ապստամբուել են իր դէմ, դիմադրութիւն են ցոյց տալիս իրեն և թագցնում հայ աւազակներին։

Հեռագիրը ստանալուն պէս, միւշիրը իսկոյն ժողովում է զօրքերը և հրամայում է չուտափոյթ անցնել Կամախի կողմերը։ Հրահանգ է տալիս զօրքին առ այժմ մարդ չը սպանել, միայն թալանել, ծեծել, կողոպտել և անպատճառ դնել չարագործներին։ Հեռագրի հիման վրա առաջին անգամ ուղարկում է 5 թաբուր զօրք և 200 թնդանօթաձիգ՝ վեց թնդանօթներով։ Կամախը չրջապատող զօրքերի թիւը այժմ 3000-ի մօտ է, իսկ 5 հազարէն աւելի բաշիբոզուկ թիւրք և քիւրդ նոյնպէս խառնուած են զօրքի հետ։

Գոմիկ, Հազարիկ և Ծակ գիւղերը, ասում են, բոլորովին կողոպտել են։ Շատ արտեր կրակ են տուել և ձիուց կոխան արել։ Արտերում դիզած պատրաստի ցորենները բոլորն էլ խլել են գիւղացիներից։ Համարեա ոչ մի ընտանի անասուն, նոյն իսկ ոչ մի հաւ չէ մնացել, բոլորն էլ թալանել են, գնացել։

Հայոց գիւղերը այնպէս են չրջապատել զօրքերով և բաշիբոզուկներով, որ ոչ մի լուր, ոչ մի յարաբերութիւն անկարելի է ունենալ. արդէօք կենդանի են, թէ մեռած, ոչ ոք գիտէ։ Երկու հոգի սպանուած է չղթայից այս կողմը՝ Լուսաւորչի մօտ, իսկ չղթայից ներս՝ յայտնի չէ, թէ ինչեր են կատարուում։

Չէքքի փաչան հեռագրել է Սեբաստիայի վալիին, որ չէրքեզներին ոտքի կանգնեցնի և զօրքի հետ միասին անմիջապէս արշաւեն դէպի Քէմախ և չրջապատեն հայոց գիւղերը։ Երիղայից էլ նորանոր գնդեր են յառաջանում։

Մանրամասնութիւնները յետոյ։

Ղ. Մ.

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 սեպտեմբերի։ Թագաժառանգ Ցեսարեվիչ և Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ իր Ամուսնու հետ աջողութեամբ հասան Լիբաւա, որտեղից ճանապարհ ընկան Օդէսա։

ՐՕՍՏՈՎ—ԴՈՆԻ ՎԸԱ։ Գրօշնոում խփեց նաւթի մի ահագին շատրուան, որը 70 սաժէն բարձրութիւն ունի։ Շատրուանը օրական 800 հազար նաւթ է արտավիժում։

ՎԻՏԵԼ, 4 սեպտեմբերի։ Զինուորական մինիստրը նախաճաշին հրաւիրեց Ֆրանսիական և զօրախաղերին ներկայ գտնվող օտարազգեստակ օֆիցերներին։ Զինուորական մինիստրի աջ կողմը նստած էր յունաց արքայորդի Նիկոլայ, ձախակողմը—Դրագոմիրով։ Մինիստրը, Ֆրանսիական զօրքի կողմից ողջունելով հիւրերին, ասեց, որ զօրախաղերի աջողութիւնը վկայում է Ֆրանսիայի զօրութեան կատարեալ վերածնութեան մասին։ Ապա մինիստրը Մադագասկարում գործող զօրքերի կենացը առաջարկեց։ Գեներալ Սոսիէ շնորհակալութիւն յայտնեց և նոյնպէս ողջունեց օտար հիւրերին։

ԿԱԶԱՆ, 5 սեպտեմբերի։ Սկսվեցին քննութիւններ բժշկական քննիչ յանձնաժողովում։ Քննութիւններին թոյլ են տրված 70 անձինք, որոնց թւում օրիորդ Ալէքսանդրա Բոգոլիւբսկայա, որը Բէրնի համալսարանի բժշկականութեան դոկտոր է։

ԲԵՐԼԻՆ, 5 սեպտեմբերի։ Կալանաւորված է «Սոցիալիստ» լրագրի խմբագիրը, գործարանատէր Վիցկէ։

ՎԻԵՆՆԱ, 5 սեպտեմբերի։ Լուրերին նայելով, Բաղէնիի մինիստրութիւնը կազմակերպված կը լինի մօտաւորապէս սեպտեմբերի 20-ին։ Բաղենիի ծրագրի մէջ մտնում են նոր ընտրողական բէֆորմը, հարկատուութեան բէֆորմը և համաձայնութիւն Ունգարիայի հետ։ Նոր մինիստրութիւնը կը դիմի չափաւոր կուսակցութիւնների օգնութեանը։

ԱԹԷՆՔ, 5 սեպտեմբերի։ Սալոնիկից ստացված տեղեկութիւններից երևում է, որ Նէվրոկոպի չրջականերում, Մակեդոնիայում, յայտնվել է բոլգարական մի նոր աւազակախումբ։ Թիւրքաց զօրքերը յարձակումն գործեցին ապստամբների վրա և գերի վերցրին մի օֆիցէրին, մի երաժշտին և հինգ զինուորներին, որոնք, պատկանում են, ինչպէս կարծում են, բոլգարական զօրքին։ Զարդված աւազակախմբի մնացորդները յետ քաշվեցին Բոլգարիա։

ԲԵԼԳՐԱԴ, 5 սեպտեմբերի։ Ազատամիտների համագումար ժողովը Ռիստիչին կուսակցութեան պարագլուխ ընտրեց։ Ռիստիչ ճառ արտասանեց, որի մէջ մատնացոյց արաւ մակեդոնական հարցի մեծ նշանակութեան վրա Սերբիայի ապագայի համար։

ՍՕՖԻԱ, 5 սեպտեմբերի։ Նէվրոկոպի չրջականներում, Մակեդոնիայում, թիւրքերի կատարած աւերմունքների մասին, «Պրավօ» լրագիրը հաղորդում է. «Օգոստոսի 16-ին արած յարձակմունքի փոխարէն թիւրքերը վրէժ առան բոլգարացիներից նրանով, որ բաշիբոզուկների խումբը կողոպտեց և այրեց Օբիդում գիւղաքաղաքը, Նէվրոկոպի մօտ։ Բազմաթիւ բնակիչներ զոհ գնացին բաշիբոզուկներին։ Աւերված են էլի չորս գիւղեր։ Գերի տարված ապստամբներին գլխատեցին մասամբ տեղն ու տեղը, մասամբ սահման անցնելու ժամանակ։ Ցասերեք անձինք, Վիչնի-փաչայի հրամանով, ուղարկված են Պալոնիկի և սարսափելի տանջանքների են ենթարկված»։ 13 ապստամբների գլխատելու լուրը հաստատվում է և ուրիշ աղբիւրներից։

ԼՕՆԴՕՆ, 5 սեպտեմբերի։ Հոնկոնգից ստացված տեղեկութիւններին նայելով, Ֆուկիէն նահանգի սահմանի վրա ապստամբութիւն ծագեց։ Ապստամբները գրաւեցին Գէնդուէնգ քաղաքը։ Իշխանութիւնները փախան։ Ապստամբների դէմ զօրքեր են ուղարկվում։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
Սեպտեմբերի 5-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	92 ր.	80 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	25 »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	67½ »
Ոսկի — — արժէ . .	7 »	40
Մաքսային կուպոններ — .	148 »	—
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկոնտ — . .	5 —	7%
4% պետական բէնտա	99 »	75
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . .	161 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ	276 »	— »
— — երկրորդ —	237 »	—
Գրաւ. թղթ. — — .	213 »	50 »
5% պետական երկաթուղ. բէնտա	101⅜ »	— »
4% Ներքին փոխառութեան . . .	98 »	50
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100 »	50 »
Ազն. կալ. Գետ. բանկի խաղարկութ.		
4½% վիպակ. գիւղ. հող. բանկի.	100⅞ »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	150 »	50 »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	102 »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	102⅛ »	—
Օդէսայի — —	100 »	— »
Թիֆլիսի — —	99⅝ »	— »

Խմբագիր և հրատարակիչ՝
ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որ աւարտել է հաշուապահութիւն, ուզում է մի որ և է յարմարաւոր պաշտօն։

Հասցէն՝ իշխան Նիկողայոս Արղութեանի մօտ, Աբասաբադսկայա հրապարակ № 2, Բարսեղեանցին։ (№ 102) 1—3

ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Կիրակի, սեպտեմբերի 10-ին, 1895, մասնակցութեամբ Լ. Ֆ. Ֆէրարիզի, Ն. Դ. Կովալենկու, Մ. Լ. Պրէսնեանի, Ն. Ն. Մակարովի և Դաժայի կը կայանայ

ԿՕՆՑԷՐՏ

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Սուզանճեանի և Լանկօի երաժշտական մագազինում և Գատուրովի լամպային մագազինում, իսկ կոնցերտի օրը՝ թատրոնի կասսայում.

Սկիզբն է 8½ ժամին։

Գասասխանատու—կառավարիչ՝ Արսկի։

(№ 101) 2—3

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄՆԵՐ

Կիրակի, սեպտեմբերի 10-ին, վրաց ազնուականների թատրոնում կը կայանայ Թիֆլիսի հայ դերասանական ընկերութեան առաջին ներկայացումը։ Կը խաղացվի «ԴԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԷՍԸ», որ բեմին յարմարեցրել են պ.պ. Սարգարեան և Վրոյր։

Խումբը կը տայ մօտ երեսուն ներկայացումներ։ Բէպերտուարը բաղկացած է թէ ինքնուրոյն և թէ թարգմանական ընտիր պիէսներից, որ ընտրվում են առանձին կազմված մասնաժողովի նախաձեռնութեամբ։

Խումբը կազմված է հետևեալ անձինքներից. տ. տ. Մէլիքեան, Զաբէլ, Փառանձեմ, Օր. օր. Վարդիթեր, Մարի-Հրանոյշ, Ախաչեան, Վարդուհի, պ. պ. Աբէլեան, Տէր-Դաւթեան, Վրոյր, Արեւշատեան, Յարութիւնեան, Աւետեան, Աղայեան, Պարոն-Սարգսեան, Ստեփանեան, Մամիկոնեան, Մէհրաբեան, Բաբաբեան, Անդրանիկ և այլք...

Աբօնիմենտ վերցնողներին 20% զիջումն։ Տեղերի գինը պակասեցրած է։ Աբօնիմենտ տոմսակներ ցանկացողները, ինչպէս և խմբի հետ որ և է գործ ունեցողները պէտք է դիմեն դերասանական ընկերութեան գրասենեակը, վրաց ազնուականների (նախկին Արծրունու) գալերէյա, № 12։

1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է տրակտիրների, դուխանների, բուֆէտների, հիւրանոցների, բէտաւոռանների և կաֆէ-բէտաւոռանների, տաք կերակուր և խմիչքներ ունեցող դարեջրատների, կահաւորված սենեակների, սրճարանների, նախաճաշիկ կամ տաք կերակուր ծախող թէյատների, չաքարեղէնի կամ կարկանդակի վաճառանոցի՝ տեղն ու տեղը զանազան մթերքներ սպառելու իրաւունքով, ուտելեղէն ծախող խանութների և իջևանատեղերի տէրերին, որ Տրակտիրային արհեստին վերաբերեալ կանոնադրութեան 35, 42 և 43 յօդուածների զօրութեամբ, Բարձրագոյն հաստատված 1893 թվի յունիսի 8-ին, տրակտիրային տուրքի դասաւորելը ամեն հիմնարկութեան վրա պէտք է վերջնականապէս կատարվի ոչ ուշ հոկտեմբերի 20-ից և եթէ այդ դասաւորումն պատրաստ չի լինի այս հոկտեմբերի 20-ին, այդ ժամանակ դա կը կատարի քաղաքային վարչութիւնը։ Այդ պատճառով Քաղաքային Վարչութիւնը խնդրում է վերոյիշեալ հիմնարկութիւնների տէրերին՝ չսպասել և թոյլատրական վկայականներ առնել տրակտիրային արհեստով պարապելու 1896 թվի համար, որպէս զի հնարաւոր լինի իր ժամանակ ընտրել դասաւորող յանձնաժողովը։ (№ 102) 1—3

ՍԱՊՕԿՐԷՋՕԼ ԿԷՕԼԷՐԻ

հեղուկ՝ դեզինֆէկցիայի համար.—կարբոլեան թթուտի միաւորումն խէժային սապօնի հետ. զանազանվում է կարբոլեան թթուտից նրանով, որ հեշտ է լուծվում։ այդ պատճառով անհամեմատ աւելի փոքր քանակութեամբ է պահանջվում և ահա թէ ինչու սապօկրէզոլի օգնութեամբ դեզինֆէկցիան շատ աւելի էժան է նստում, քան թէ կարբոլեան թթուտով դեզինֆէկցիան։ Խէժի սապօնի պարունակութիւնը ինքն իրան ուժեղացնում է կարբոլեան թթուտի դեզինֆէկցիական յատկութիւնները։

ԶՆԶՈՒՄ Է ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԴԱՐՇԱՀՈՏՈՒԹԻՒՆ

Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ նշանաւոր առևտրականների մօտ։

(№ 87) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով տեղեկացնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ 1895 թվի սեպտեմբերի 2-ից քաղաքային տուրք հաւաքողները Վերայի կամուրջի վրա, կամուրջով անցնելու համար վճար ստանալու ժամանակ կը տան առանձին տոմսակներ, որոնք կը պահանջվեն կամուրջի միւս ծայրին։ Քաղաքային վարչութիւնը, տուրքերի աւելի լաւ կոնտրոլ անելու և տարաձայնութիւնների առաջն առնելու համար, խնամարհաբար խնդրում է կամուրջով անցնողներից պահել այդ տոմսակները և տալ կամուրջի տուրք ժողովողին՝ կամուրջի միւս ծայրում։ (№ 100) 2—3

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ս. ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

Սօլօլակ, Սադովայա փ. № 46 (Սերդիեվսկայա փողոցի դիմաց)

Մանուկների ընդունելութիւնը (երկու սեռի) կը սկսվի օգոստոսի 22-ից, իսկ ուսումը—սեպտեմբերի 1-ից։ (№ 93) 5—6

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, բաչխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան։

Բ) Առևտրական թուաբանութիւն.

Գ) Առևտրական նամակագրութիւն.

Դ) Դեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 4 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ Ֆրէյլինեան փողոց, տան Սուլթանովի, № 13։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդզէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։

(№ 86) (հ. չ.) 8—15

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ընդունում է գիշերօթիկ, կիսագիշերօթիկ և երթևեկ աշակերտներ. պատրաստում է գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադէտների կորպուսի և այլ ուսումնարանների համար։ Գիշերօթիկներ ընդունվում են և ուրիշ ուսումնարանների աշակերտներ։

Հասցէն. ТИФЛИСЪ. Сололаки. Гановская ул., № 11.

(№ 65) 3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Сентября 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.